



Սիպիլ

Ժանյակները

«Շատ նիհար է, շատ ալ տըժգույն», կ'ըսեր,
Երբ փողոցն կ'անդներ երկայն մեկնոցով ,
Մեջքը սեղմված լարերուն մեջ քորսեին,
Աչքն ալ հովեն պատրասպարած ակնոցով:

Ծըփին մույնքը բարեկամ չեր սևերուն,
Մութ ըզգեստով անշուք աղջիկ մ'էր խոնարհ,
Սև թավիշն օձիքն երկար կը գողնար:
Դեմքն ցուլքեր, ուլն թովքեր կը գողնար:

Իր քաղաքի արդուգարդովն ապերախտ
Գեղանի չէր բնավ այդ կինն աննըման,
Ջոր դիտելով իսկ կ'ըլլայինք բարեբախտ
Երբոր պարի սրբահին մեջ կուգար ման:

Ի'նչ աղվոր էր օթյակին մեջ՝ երբ ճերմակ
Ժանյակով մը լոկ կը սքողեր իր թներ,
Եվ ուսերուն, լանջքին վրա անդիմակ՝
Բեհեզի մը թեթև ծալքը կը թներ:

Մարած, հալած երանգներու մեջ պես-պես՝
Իր սեփական փայլը կ'առներ դեմքն անոր,
Եթերային, անծի'ր, աննյո'ւթ ամպի պես

Միշտ անմատույց, անըրջային և միշտ նոր:

Ժանյակներու այդ փրփուրներ թափանցիկ,
Ծակտիկն անոնց, ցանցը բարակ օդային

Եվ մետաքսե ծըփանքն ալ թույլ ցոլացիկ
Բոլոր անձին դյութիչ բան մը կուտայն:

Ճառագայթ մը, լույս մը, ավյուն մը կյանքի
Մութ նայվածքին մեջ հրապույր մը կ'արծարծեր,
Խորի՛ն անդունդ առանց ելքի ու հանգի,
Որուն գաղտնիքն ունի շանթերն ու կայծեր:

Եվ ժլայիտ մ'ալ, չըքնաղ փրթթում մը վարդի
Կուգար բանալ շրթութներուն իր թերթեր
Ինչպես արևն իր ըզգեստովը գարդի,
Որուն առջև կը բացվին այգն ու եթեր:

Եվ կը բացվեր սիրտն երագի մը հեշտին
Այդ ժանյակե մըթնոլորտին մեջ տարտամ,
Ջերմ, կըմայող զարկ մը տալով իր շեշտին,
Չոր կը պաշտեր քերթողն ու ջոջն ալ փարթամ:

Բայց ամենուն համար սիրտն էր հեշտին
Լոկ կը սիրեր պերճ ժանյակներն անապակ,
Որոնց հըմայքն անձրևի պես կը թափեր
Այնքան խունկեր, այնքան վարդեր ոտքին տակ:

Կը փայփայեր գանոնք տենչով կաթոգին
Կյանքը դըրած անոնց վըրա հովանի,
Կըրքոտ սեր մը, ուր կար հանճարն ու հոգին,
Ինչպես գիտեն սիրել կանայք խելանի:

Սև առտու մը սակայն հաղով մ'արթնացավ
Իր ժանյակե լայն բարձերուն կրոթընած,
Մեջքին վըրա, կողքին վըրա կ'զգար ցավ,
Ու կը հևար հոգնած, դեղնած, քրրտնած:

Թատրոնին մեջ ցուրտ էր առեր, կը հիշեր,
Երբ օթյակին դուռը բացվեր էր ետին.